Հաստատված է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2022թ.սեպտեմբերի 5-ի, №1 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝

_____ Սրբուհի Գևորգյան

ԿԱՐԳ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ (ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐՈՎ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՊՄՀ) առկա և հեռակա ուսուցման ձևերով մագիստրատուրայի ընդունելության և ուսումնառության կազմակերպման կարգն ու պայմանները:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ՀՊՄՀ կանոնադրությունը և իրավական այլ ակտեր:

1.3. Յուրաքանչյուր ուսումնական տարվա մագիստրոսական կրթական ծրագրերի ցանկը, ռեկտորի ներկայացմամբ սահմանված ժամկետներում հաստատում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

1.4. ՀՊՄՀ ռեկտորի համապատասխան հրամանով սահմանված նվազագույն քանակի ուսանողներ չընդունվելու դեպքում տվյալ մագիստրոսական կրթական ծրագիրը չի իրականացվում:

1.5. Մագիստրատուրայի ընդունելության համար պահանջվող ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանվում է

ռեկտորի հրամանով:

1.6. ՀՊՄՀ մագիստրատուրայում ուսանողին թույլատրվում է միաժամանակ **առկա** ուսուցմամբ սովորել միայն մեկ կրթական ծրագրով:

1.7. Արգելվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության կամ պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց' առկա ձևով ուսուցումը ՀՊՄՀ մագիստրատուրայում՝ բացառությամբ ՀՀ օրենքով չարգելված դեպքերում:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Առկա ու հեռակա ուսուցման ձևերով, մրցութային կարգով ՀՊՄՀ մագիստրատուրա կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

2.2. Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է՝

ա) սույն կարգով սահմանված ընդհանուր հիմունքներով (մրցույթին կարող են դիմել միայն ՀՊՄՀ շրջանավարտները),

բ) հարցազրույցով' Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշմամբ սահմանված կարգով:

2.3. ՀՊՄՀ մագիստրատուրայում ընդունելությունը առկա ուսուցման ձևով կատարվում է երկու փուլով, իսկ հեռակա ուսուցման ձևով' մեկ փուլով: Փուլերի անցկացման ժամանակացույցը հաստատվում է ռեկտորի հրամանով:

2.4. Առկա ուսուցման ձևով առաջին փուլով անվճար ու վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ձևերի նույն մասնագիտությամբ (կրթական ծրագրի) վերջին երեք ուսումնական տարվա (ուսումնական տարիների հաշվարկը սկսվում է գործող ուսումնական տարվանից) շրջանավարտները' ըստ իրենց ամփոփիչ ատեստավորման գնահատականի և դիպլոմի հավելվածում գրանցված միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի):

Դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային կարգով՝ առաջնահերթությունը տալով ՄՈԳ-ին: Հավասար միավորների առկայության դեպքում հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափորոշիչները'

ա) գերազանցության դիպլոմի առկայությունը,

բ) ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

գ) եթե տվյալ դիմորդն ունի հրատարակված գիտական հոդվածներ, զեկույցներ, խոհագրություններ և այլք:

Տվյալ փուլում առանձին մագիստրոսական կրթական ծրագրերի ընդունելության մուտքային պահանջները յուրաքանչյուր տարի սահմանվում են ռեկտորի հրամանով:

Անվճար (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տեղերի համար հայտարարված մրցույթը չհաղթահարելու դեպքում 1- ին փուլի դիմորդներն ընդունվում են նույն կրթական ծրագրի վճարովի համակարգ:

2.5. Միայն մագիստրատուրայում գործող, ինչպես նաև ռեկտորի հրամանով սահմանված առանձին մագիստրոսական կրթական ծրագրերի անվճար ու վճարովի ուսուցման համակարգերում ընդունելությունը կատարվում է բացառապես ընդունելության հարցազրույցի արդյունքների հիման վրա' մրցութային կարգով սահմանված բակալավրիատի կրթական ծրագրերից: Մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ, ՀՀ այլ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

2.6. Երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է միայն վճարովի ուսուցման համակարգում:

Այս փուլի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ և այլ պետական, ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա ու հեռակա ուսուցման ձևերի) բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

ՀՊՄՀ, ռեկտորի հրամանով սահմանված ՄՈԳ-ի և ամփոփիչ ատեստավորման գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած ՀՊՄՀ բակալավրիատի առկա ու հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք ուսումնական տարվա (տարիները հաշվարկվում են' սկսած գործող ուսումնական տարվանից) դիմորդների երկրորդ փուլով ընդունելությունը նույն մասնագիտության (կրթական ծրագրի) վճարովի ուսուցման համակարգ կատարվում է առանց ընդունելության քննության՝ ըստ սահմանված տեղերի քանակի:

ՀՊՄՀ ռեկտորի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը չհաղթահարած դիմորդների ընդունելությունը նույն մասնագիտության (կրթական ծրագրի) վճարովի ուսուցման համակարգում կատարվում է հարցազրույցի արդյունքների հիման վրա՝ մրցութային հիմունքներով: Այլ մասնագիտության (կրթական ծրագրի) հեռակա ուսուցման ձևով ընդունելությունը կատարվում է հարցազրույցի միջոցով:

2.7. Մանկավարժի որակավորում չունեցող դիմորդները ՀՊՄՀ մագիստրատուրայում (առկա և հեռակա ուսուցման ձևերում) «0114 Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն» ոլորտի մասնագիտություններ ընդունվելու համար դիմելիս երկրորդ փուլի ընդունելության համար լրացուցիչ մասնակցում են հարցազրույցի «Մանկավարժություն» և «Հոգեբանություն» դասընթացներից, որի հարցաշարը նախապես հրապարակվում է պաշտոնական կայքում:

2.7. Հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայում կրթությունը կազմակերպվում է միայն վճարովի հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հեռակա ուսուցման ձևով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ և այլ պետական, ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա ու հեռակա ուսուցման ձևերի) բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

ՀՊՄՀ ռեկտորի հրամանով սահմանված ամփոփիչ ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած ՀՊՄՀ բակալավրիատի առկա ու հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք ուսումնական տարվա (տարիները հաշվարկվում են՝ սկսած գործող ուսումնական տարվանից) դիմորդների նույն մասնագիտության (կրթական ծրագրի) հեռակա ուսուցման ձևով ընդունելությունը կատարվում է առանց քննության: Այլ մասնագիտության (կրթական ծրագրի) հեռակա ուսուցման ձևով ընդունելությունը կատարվում է հարցազրույցի միջոցով:

2.8. Մագիստրոսական որոշ կրթական ծրագրերի ընդունելությանը կարող են դիմել բացառապես տվյալ մասնագիտությամբ բակալավրի կրթություն ունեցող կամ բակալավրի հարակից մասնագիտությամբ մասնագիտական գիտելիքներ ունեցող շրջանավարտները: Նման մագիստրոսական ծրագրերի ցանկն ու պահանջները յուրաքանչյուր տարի հաստատվում են ռեկտորի հրամանով:

2.9. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են սահմանված կարգով, չափով և ժամկետում վճարել ուսման

վարձավճարը՝ ըստ պայմանագրի, որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը:

2.10. ՀՊՄՀ մագիստրատուրա ընդունվելու մասին դիմորդի հրամանը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում տվյալ ֆակուլտետում կազմվում է անձնական գործը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ՀՊՄՀ ռեկտորի ղեկավարությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ՀՊՄՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտորը, կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների /ուսումնամեթոդական վարչության պետը, ՀՊՄՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը կամ համապատասխան կենտրոնի/բաժնի վարիչը:

Դիմորդների գործերն ընդունումը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

Մագիստրատուրայի ընդունելության հայտերն ուսումնասիրելու, քննությունների արդյունքներն ամփոփելու և դիմորդների ընդունելության վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով ՀՊՄՀ ռեկտորի հրամանով ստեղծվում է մանդատային հանձնաժողով՝ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտորի նախագահությամբ՝ ՀՊՄՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտորը, կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների /ուսումնամեթոդական վարչության պետը, ՀՊՄՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը կամ համապատասխան կենտրոնի/բաժնի վարիչը:

Ընդունելության հարցազրույցների անցկացման նպատակով ՀՊՄՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտորի առաջարկով և ռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ ֆակուլտետի դեկանը, մագիստրոսական համապատասխան կրթական ծրագրերի ղեկավարները կամ ամբիոնի վարիչները և ընդունող հանձնաժողովի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության):

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

4.1. ՀՊՄՀ մագիստրատուրայի ընդունելության համար պահանջվող

փաստաթղթերն են՝

ա) մագիստրատուրայի ընդունելության լրացված դիմում-հայտ, որտեղ կարող է նշվել միայն մագիստրոսական մեկ կրթական ծրագիր,

բ) բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակը և պատճենները,

գ) արտասահմանյան բուհի դիպլոմ ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել նաև «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք' դիպլոմի համարժեքության մասին,

դ) 2 լուսանկար (3x4 չափի),

ե) զինվորական գրքույկի բնօրինակը և պատճենը (արական սեռի դեպքում) (1-4-րդ և 18-19-րդ էջերը),

զ) անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակը և պատճենը,

է) ընդունելության ծառայությունների համար գանձվող վճարման անդորագիրը: Ընդունելության ծառայությունների համար գանձվող գումարի չափը սահմանել 3000 ՀՀ դրամ, որը փոխանցվում է բուհի հաշվեհամարին: Անկախ ընդունելության արդյունքներից՝ տվյալ գումարը դիմորդին չի վերադարձվում:

Դիմորդի կողմից ներկայացված դիպլոմի իսկությունը պարզելու նպատակով հանձնաժողովն իրավասու է, ըստ անհրաժեշտության, դիմորդից պահանջել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» ներկայացնել տեղեկանք դիպլոմի իսկության մասին:

Փաստաթղթերի բնօրինակների և պատճենների համապատասխանությունը պարզելուց հետո բնօրինակները վերադարձվում են դիմորդին:

4.2. Տվյալ ուսումնական տարվա մագիստրատուրայում ընդունելության ժամանակացույցը սահմանվում է ռեկտորի հրամանով:

5. ՀՊՄՀ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.1. ՀՊՄՀ առկա մագիստրատուրայում ուսումնառությունը կազմակերպվում է հիբրիդային ձևաչափով[1]՝ ՀՀ օրենսդրության համաձայն հաստատված մասնագիտական կրթական ծրագրերով:

5.2. Առկա ուսուցման ձևում առաջին և երկրորդ կիսամյակներում ուսումնառությունը կազմակերպվում է շաբաթական երեք օր, որից մեկը՝ առկա ձևաչափով, երկուսը՝ հեռավար՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

5.3. Առկա ուսուցման ձևում երրորդ և չորրորդ կիսամյակում

[1] Կրթական ծրագիրը սպասարկող համապատասխան դեկանատի կողմից կազմակերպվող ուսուցման գործընթաց է, որի ընթացքում որոշ դասընթացներ իրականացվում են հեռավար ձևաչափով:

ուսումնառությունը կազմակերպվում է շաբաթական երկու օր, որից մեկը՝ առկա ձևաչափով, մյուսը՝ հեռավար ձևաչափով ՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

5.4. ՀՊՄՀ մագիստրատուրայում որոշ կրթական ծրագրերի համար, դեկանի գրավոր զեկուցագրի հիման վրա, ռեկտորի հրամանով կարող է սահմանվել ուսումնառության միայն առկա ձևաչափ՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները:

5.5 ՀՊՄՀ մագիստրատուրայում առկա/հիբրիդային ուսուցման ձևաչափում ընթացիկ և ամփոփիչ ստուգումներն իրականացվում են միայն առկա ձևաչափով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն կարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ՀՊՄՀ գիտական խորհրդի կողմից ՀՊՄՀ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

6.2. Սույն կարգը հրապարակվում է ՀՊՄՀ պաշտոնական կայքում: Սույն կարգի 5-րդ կետի դրույթները կիրառվում և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, իսկ մնացած դրույթները՝ հաջորդ ուսումնական տարուց:

6.3. Սույն կարգի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել մագիստրոսական կրթության կազմակերպման վերաբերյալ նախորդ կանոնակարգերը և դրանց փոփոխությունները: